

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերով գործառնությունների ամփոփ վերլուծական


2020 թվականի առաջին կիսամյակ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, պարտատոմսերի շուկան դիտարկում է որպես ֆինանսական ռեսուրսների ներգրավման գործուն ալյընտրանք: Դեռևս 2015 թվականից Բանկը, որպես թողարկող մուտք է գործել պարտատոմսերի շուկա և ակտիվ գործառնություններ է իրականացվում այդ շուկայում:

Տեղեկատվությունը առավել մանրամասն ներկայացված է ստորև.

ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

30.06.2020թ-ի դրությամբ Բանկը առաջնային շուկայից ունի ներգրավված շուրջ 47,788 մլն ՀՀ դրամի պարտատոմսեր, որոնք կազմում են Բանկի ընդհանուր պարտավորությունների 18.0%-ը:



Գծապատկեր 1. Պարտատոմսերով ներգրավված միջոցների արժույթային կառուցվածքը

Ստորև ներկայացված է Բանկի կողմից տեղաբաշխված բոլոր պարտատոմսերի ամփոփ նկարագրությունը:

Աղյուսակ 1. Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերի նկարագիրը 01.01.2020թ-ի դրությամբ

	Թողարկման արժույթ	Տեղաբաշխման ծավալ (հազ.)	Ժամկետայնություն	Արժեկտրոնային եկամտաբերություն	Մարման ժամկետ	Անվանական արժեք
2015 թվական						
SWISB1	USD	2,000	3 տարի	7.50 %	16.04.2018	1,000
SWISB2	USD	3,000	4 տարի	8.00 %	16.04.2019	1,000
SWISB3	USD	5,000	5 տարի	8.50 %	27.04.2020	1,000
2017 թվական						
SWISB4	USD	10,000	7 տարի	6.75%	15.06.2024	100
SWISB5	EURO	10,000	6 տարի	5.00%	15.06.2023	100
SWISB6	ՀՀ դրամ	2,000,000	4 տարի	12.75%	15.06.2021	50,000
2018 թվական						
SWISB7	ՀՀ դրամ	3,000,000	5 տարի	11.5%	24.05.2023	50,000
SWISB8	USD	6,000	7 տարի	6.5%	23.05.2025	100
SWISB9	USD	10,000	6 տարի	6%	22.11.2024	100
2019 թվական						
SWISB7	ՀՀ դրամ	3,000,000	5 տարի	11.5%	24.05.2023	50,000
SWISB2A	USD	5,000	6 տարի	6.5%	02.05.2025	100
SWISB2B	EURO	3,000	4 տարի	4%	02/05/2023	100

Հիմնվելով նախորդ թողարկումների հաջող փորձի վրա՝ 2020 թվականի առաջին կիսամյակում Բանկը տեղաբաշխել է ևս 3 տրանշի պարտատոմսեր՝ աղյուսակ 2-ում նշված պայմաններով:

Աղյուսակ 2. Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերի նկարագիրը՝ 2020թ-ի առաջին կիսամյակի ընթացքում

2020 թվական						
SWISBC	ՀՀ դրամ	10,000,000	5 տարի	9%	01.06.2025	50,000
SWISBD	USD	10,000	6 տարի	6.0%	01.06.2026	100
SWISBE	EUR	5,000	5 տարի	3.5%	01.06.2025	100

2020 թվականի առաջին կիսամյակի դրությամբ բոլոր պարտատոմսերը ցուցակված են եղել Հայաստանի ֆոնդային բորսայում, բացառությամբ՝ 2020թ-ի առաջին կիսամյակում տեղաբաշխված պարտատոմսերինը, որոնք ցուցակվել են 2020 թ-ի հուլիս ամսին: Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերը առանձնանում են նրանով, որ կորպորատիվ պարտատոմսերի շուկայում թողարկված ամենաերկարաժամկետ պարտատոմսերն են:

2020թ-ի կիսամյակում մարվել են SWISB3 տրանշի 5,000,000 ԱՄՆ դոլար անվանական ծավալով պարտատոմսերը:

Ամփոփելով՝ Բանկը բոլոր թողարկումների արդյունքում առաջնային շուկայից ներգրավել է 18 մլրդ ՀՀ դրամ, 51 մլն ԱՄՆ դոլար և 18 մլն Եվրո գումար /անվանական արժեքով/:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

Ցանկացած արժեթղթի և դրա թողարկողի նկատմամբ ներդրողների հետաքրքրությունների բնութագիրը բացահայտվում է երկրորդային շուկայում այդ արժեթղթերի վերաբերյալ գրանցված բորսայական ցուցանիշներով:

Ստորև ներկայացվում են Բանկի կողմից շրջանառվող բոլոր պարտատոմսերի երկրորդային շուկան բնութագրող ցուցանիշների ամփոփ վերլուծություն:

2017-2020թ-ի առաջին կիսամյակ ժամանակահատվածում Հայաստանի Ֆոնդային Բորսայում կատարված գործարքները՝ ըստ տարիների:

2017 թվական

Աղյուսակ 3.

Պարտատոմսերի բորսայական հապավում	Գործարքի միջին գին	Գործարքների քանակ	Պարտատոմսերի քանակ	Ընդհանուր ծավալ (հազ.)	Վերջին գործարքի գին
SWISB1	3.74%	1	1	1.0 USD	3.74%
SWISB2	4.25%	1	19	20.9 USD	4.25%
SWISB3	4.74%	5	85	94.3 USD	4.70%
SWISB4	6.70%	33	12,972	1,321.9 USD	6.24%
SWISB5	4.78%	7	1,193	122,0 EUR	4.69%
SWISB6	12.61%	9	2,353	120,631.2 AMD	11.6%

2018 թվական

Աղյուսակ 4.

Պարտատոմսերի բորսայական հապավում	Գործարքի միջին գին	Գործարքների քանակ	Պարտատոմսերի քանակ	Ընդհանուր ծավալ (հազ.)	Վերջին գործարքի գին
SWISB2	5.4%	3	75	78.6 USD	4.00%
SWISB3	5.13%	2	33	35.5 USD	5.35%
SWISB4	6.36%	15	2,642	273.4 USD	5.85%
SWISB5	4.97%	21	64,140	6,554.9 EUR	4.30%

SWISB6	12.15%	20	8,692	459,788.9 AMD	9.23%
SWISB7	11.18%	20	30,108	1,582,395.0 AMD	10.39%
SWISB8	6.50%	35	41,712	4,270.3 USD	6.00%

2019 թվական

Աղյուսակ 5.

Պարտատոմսերի բորսայական հապավում	Գործարքի միջին գին	Գործարքների քանակ	Պարտատոմսերի քանակ	Ընդհանուր ծավալ (հազ.)	Վերջին գործարքի գին
SWISB2	3.18%	5	82	83.3 USD	2.75%
SWISB3	3.09%	8	73	76.4 USD	2.0%
SWISB4	5.84%	32	10,906	1,159.0 USD	5.60%
SWISB5	3.51%	7	3,620	387.7 EUR	3.19%
SWISB6	9.30%	27	3,195	173,029.5 AMD	8.95%
SWISB7	10.35%	25	32,763	1,759,695.5 AMD	10.00%
SWISB8	5.89%	19	2,308	240.2 USD	5.60%
SWISB9	5.63	1	180	18.5 USD	5.63%
SWISB2A	6.10%	21	5,959	616.3 USD	6.0%
SWISB2B	3.60%	11	1,729	176.85 EUR	3.19%

2020 թվականի առաջին կիսամյակ

Աղյուսակ 6.

Պարտատոմսերի բորսայական հապավում	Գործարքի միջին գին	Գործարքների քանակ	Պարտատոմսերի քանակ	Ընդհանուր ծավալ (հազ.)	Վերջին գործարքի գին
SWISB3	2.03%	3	48	49.0 USD	2.14%
SWISB4	5.16%	8	3,056	328.5 USD	5.32%
SWISB5	3.29%	11	3,046	324.1 EUR	3.3%
SWISB6	7.53%	12	1,580	86,261.9 AMD	6.8%
SWISB7	8.92 %	11	4,834	265,248.5 AMD	7.7%
SWISB8	5.42%	11	2,285	243.0 USD	5.63%
SWISB9	5.45%	1	500	51.8 USD	5.45%
SWISB2A	5.69%	5	284	29.8 USD	5.63%
SWISB2B	3.72%	10	845	85.3 EUR	3.73%

Պարտատոմսերի իրացվելիության բավարար մակարդակ ապահովելու նպատակով Բանկն օգտվում է շուկա ստեղծողի ծառայություններից, ինչը հնարավորություն է տալիս

Հայաստանի Ֆոնդային Բորսայում յուրաքանչյուր առևտրային նստաշրջանի ընթացքում ապահովել պարտատոմսերի երկկողմանի գնանշումներ, այսինքն՝ շուկա ստեղծող կազմակերպության կողմից ֆոնդային բորսայի առևտրային համակարգում օրական տեղադրում են միաժամանակ պարտատոմսերի գնման և վաճառքի հայտեր՝ նվազագույնը թողարկման ծավալի 0.5%-ի չափով:

Միաժամանակ, հետաքրքիր է ուսումնասիրել Բանկի պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերության և 2020 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ ֆոնդային բորսայում վաճառքի գնանշումների հարաբերակցությունը, որոնք ներկայացված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7.

Պարտատոմսի բորսայական հապավում	Թողարկման ծավալ (հազ.)	Մարման ամսաթիվ	Մինչև մարում մնացած ժամկետ	Արժեկտրոնային եկամտաբերություն	Ընթացիկ վաճառքի գնանշում	Փոփոխություն / Տոկոսային կետ
SWISB4	10,000 USD	15.06.2024	1446	6.75%	5.75%	-1.0%
SWISB5	10,000 EUR	15.06.2023	1080	5.00%	3.0%	-2.0%
SWISB6	2,000,000 AMD	15.06.2021	350	12.75%	6.17%	-6.58%
SWISB7	6,000,000 AMD	24.05.2023	1058	11.50%	7.77%	-3.73%
SWISB8	6,000 USD	23.05.2025	1788	6.5%	5.65%	-0.85%
SWISB9	10,000 USD	22.11.2024	1606	6.00%	5.8%	-0.2%
SWISB2A	5,000 USD	02.05.2025	1767	6.50%	5.65%	-0.85%
SWISB2B	3,000 EUR	02.05.2023	1036	4.00%	3.76%	-0.24%
SWISBC*	10,000,000 AMD	01.06.2025	1797	9.00%	-	-
SWISBD*	10,000 USD	01.06.2026	2162	6.00%	-	-
SWISBE*	5,000 EURO	01.06.2025	1797	3.50%	-	-

* 30.06.2020թ-ի դրությամբ ֆոնդային բորսայում վաճառքի գնանշումներ չեն ունեցել:

Նշված արժեթղթերի գնանշումներն իրականացվել են 2020թ-ի հուլիս ամսից: